ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 մարտի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

33
(2699)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ

Ավելի քան երեք տարի է, ինչ Հայաստանի կառավարությունը փորձում է Վրաստանի Փոթիի եւ Ռուսաստանի Կովկաս նավահանգիստների միջեւ լաստանավային բեռնափոխադրումներ կազմակերպել, որը պետք է այլընտրանք դառնա մշտապես ծանրաբեռնված Վերին Լարսի անցակետին: Լաստանավեր ձեռք բերելու կառավարության մտադրության մասին առաջին անգամ դեռ 2019-ի նոյեմբերին Ազգային ժողովում հայտարարել էր տարածքային կառավարման եւ զարգացման նախկին նախարար Սուրեն Պապիկյանը: Այս երեք տարիների ընթացքում տարբեր խոստումներ են եղել, որոնք որեւէ մեկն էլ իրականություն չեն դարձել: Լաստանավեր գնելու մտադրության մասին կառավարության 2019-ի հայտարարությունից հետո՝ շուրջ մեկուկես տարվա ընթացքում, որեւէ առաջընթաց չգրանցվեց: Լռությունը 2021-ի օգոստոսին խախտեց էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը՝ հայտարարելով, որ կառավարությունը փորձելու է լաստանավային ուղին գործարկել մինչեւ 2021-ի տարեվերջ: Ավելի ուշ նախարարը հայտնեց, որ լաստանավային փոխադրումը կսկսի գործել նոյեմբերից, սակայն ո՛չ նոյեմբերին, ո՛չ էլ 2021-ի տարեվերջին լաստանավային անցումը չգործարկվեց:

2022-ի մարտին կառավարությունը որոշում ընդունեց պետբյուջեից սուբսիդավորել կանոնավոր լաստանավային բեռնափոխադրման՝ տնտեսվարողների ծախսերը: Արդեն մայիսին Վահան Քերոբյանը կառավարության նիստին ազդարարեց, որ 2022-ի հունիսի 15-ից կմեկնարկի լաստանավային հաղորդակցությունը, ինչը վերահաստատեց նաեւ հունիսին 6-ին: Հունիսին 15-ն անցավ, սակայն լաստանավային ուղին կրկին չգործարկվեց: Օգոստոսի 11-ին էկոնոմիկայի նախարարը հայտարարեց, որ լաստանավի գործարկումն ընդամենը օրերի հարց է, սակայն 2022-ը նախորդ տարվա պես անցավ առանց խոստացված լաստանավային հաղորդակցության: Քրոնիկոնը ամփոփել էր CivilNetCheck-ը եւ եւս մեկ անգամ ապացուցել, որ կառավարության խոստումներն իրականություն չեն դառնում:

Այսպիսով, չնայած կառավարության հավաստիացումներին եւ վերջնաժամկետներին՝ մինչ օրս լաստանավային անցումը չի գործարկվել, իսկ հայաստանյան տնտեսվարողների բեռնատարները շարունակում են շաբաթներով սպասել Վերին Լարսում:

ՀՀ արտաքին գործերի ներկայիս նախարար Արարատ Միրզոյանին ծեծի ենթարկելու գործով հսկող դատախազ է նշանակվել Գորիկ Հովակիմյանը: Ուշագրավն այն է, որ նա անցել է «Մարտի 1»-ի գործով: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Գորիկ Հովակիմյանի դեմ «Մարտի 1»-ի գործով չերյոմուխայից վնասվածք ստացած անձանցից մեկը ցուցմունք է տվել, թե Հովակիմյանը իր աշխատասենյակում բռնության է ենթարկել իրեն, ինչը դարձել է քննության առարկա, եւ հետագայում գործը կարճվել է: Ի դեպ, Հովակիմյանը անգամ 2018 թվականին ՀՔԾ-ում՝ ներկայիս Հակակոռուպցիոն կոմիտեում, հարցաքննվել է որպես վկա: Հիշեցնենք, որ խոսքը 2020 թվականի նոյեմբերի 9-ի առավոտյան ՀՀ ազգային ժողովի դիմաց մեծ թվով անձանց կողմից խորհրդարանի ղեկավար Արարատ Միրզոյանին ծեծի ենթարկելու դեպքի մասին է: Հիշեցնենք, որ ԱԺ նախկին նախագահը տեղափոխվել էր հիվանդանոց եւ վիրահատության ենթարկվել: Այս միջադեպից երեք տարի անց նախաքննական մարմինը երկու անձանց է օրերս կալանավորել, որոնք չեն ընդունում, որ ծեծել են Արարատ Միրզոյանին:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Ազատ գյուղի զինվորների կացարանում բռնկված ողբերգական հրդեհի գործով նշանակվել էր թմրաբանական փորձաքննություն, քանի որ կասկածներ էին եղել, թե թմրանյութ է եղել կացարանում: Եզրակացությամբ հաստատվել է, որ ողջ մնացած զինվորներն ու սպան թմրանյութ չեն օգտագործել: Նախաքննական մարմինը նաեւ դատաքիմիական փորձաքննություն է նշանակել՝ հասկանալու համար, թե նրանք ալկոհոլ օգտագործել են, թե ոչ: Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ կենդանի մնացած երկու զինվորն ու սպան ալկոհոլ եւս օգտագործած չեն եղել: Ի դեպ, սպա Եղիշե Հակոբյանին այրվածքաբանության հիվանդանոցից տեղափոխել են Մուրացանի զինվորական հոսպիտալ, եւ նա կրկին պատրաստակամություն է հայտնել շարունակել հարցաքննությունը: Հիշեցնենք, որ հունվարի 19-ին Ազատ գյուղի զինվորական կացարանում հրդեհ էր բռնկվել, ինչ հետեւանքով մահացան 15 զինծառայող. գործով մեղադրյալի աթոռին են 4 անձ:



Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը 240 հազար դրամ է տրամադրել դրոշներ գնելու համար: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այդ գումարով ՀՀ արտաքին գործերի նախարարությունը Լյուքսեմբուրգի դրոշներ է գնել: Խոսքը 4 դրոշի մասին է, այսինքն՝ յուրաքանչյուր դրոշի համար տրամադրվել է 60 հազար դրամ: Մենք տեղեկացանք, որ այդ դրոշները գնվել են Լյուքսեմբուրգի ԱԳ նախարարի՝ Հայաստան այցի ժամանակ: Լյուքսեմբուրգի ԱԳ նախարարի տեղափոխության համար 370 հազար դրամի պայմանագիր է կնքվել, եւ տրամադրվել է տրանսպորտային ծառայություն: Մեկ այլ պայմանագրով՝ Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության արտաքին եւ եվրոպական գործերի նախարար Ժ. Ասելբորնի գլխավորած պատվիրակությանը օդանավակայանում դիմավորելու համար 50 հազար դրամ է ծախսվել: Այդ գումարով մեկնող եւ ժամանող անձանց սպասարկում է իրականացվել օդանավակայանում: 120 հազար դրամ էլ տրամադրվել է թարգմանիչներին՝ թարգմանական ծառայություններ մատուցելու համար: Մետաքսե փողկապ գնելու համար ՀՀ արտաքին գործերի նախարարությունը 53 հազար դրամ է ծախսել: Մեկ այլ գնմամբ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը 10 շիշ ջուր է գնել եւ ընդհանուր առմամբ 51 հազար դրամ գումար ծախսել այդ նպատակով:

ՓԱՓՈՒԿ ՈՒԺ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎՐԱ ՃՆՇՈՒՄՆԵՐԸ ՇԱՏԱՆՈՒՄ ԵՆ

Արցախը Հայաստանին եւ արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը՝ Լաչինի միջանցքը, արդեն 80 օրից ավելի է՝ փակ է, ինչի հետեւանքով հումանիտար ճգնաժամ է ստեղծվել այնտեղ: Ադրբեջանը հրաժարվում է բանակցությունների դուրս գալ ո՛չ միայն Հայաստանի, այլեւ Ռուսաստանի հետ, ավելին՝ հրաժարվում է կատարել անգամ Հաագայի միջազգային դատարանի վճիռը, որով պարտավորվել էր բացել Արցախի՝ կյանքի ճանապարհը: Արցախում ստեղծված իրավիճակի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է քաղաքագետ Լեւոն Շիրինյանի հետ:



-Պարոն Շիրինյան, ինչպե՞ս կգնահատեք Արցախում ստեղծված իրավիճակը, ի՞նչ եք կարծում, ի՞նչը կստիպի Ադրբեջանին բացել Լաչինի միջանցքը:

-Ադրբեջանը Լաչինի միջանցքի նկատմամբ ունի այնքան լիազորություն, որքան Հայաստանը. երկուսի լիազորություններն էլ զերո են: Ռուսներն են ադրբեջանցիներին խնդրել, որ փակեն ճանապարհը: Տեսնում ենք, որ գնալով Ադրբեջանի վրա ճնշումները շատանում են, մի օր կբացվի միջանցքը, իհարկե: Խնդիրներ կան, բայց այդքան սուր չեն, Ադրբեջանն ուզի-չուզի պետք է բացի ճանապարհը: Ենթադրենք՝ եթե այսօր Ադրբեջանը բացի միջանցքը, Ռուսաստանը «կմորթի» Ադրբեջանին, որովհետեւ Ռուսաստանն է փակել ճանապարհը: Հարցը պետք է ճիշտ դնել, որպեսզի խնդիրը լուծվի: Այս հարցը մի քանի կողմ ունի. Հայաստանը ժողովրդավարական շատ երկրների կողմից հզոր աջակցություն ունի, որի բարձրակետը դարձավ Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի հայտարարությունը ինքնորոշման իրավունքի մասին: Ուրեմն ամեն բան լավ է, պետք է գնանք առաջ, խնդիրը կլուծվի: Մեկ բան հստակ է՝ Հայաստանը երբեք չպետք է ներքաշվի կոնֆլիկտի մեջ, ինչը Ռուսաստանի ուզածն է. նրա նպատակն է, որ Հայաստանը ներքաշվի կոնֆլիկտի մեջ: Ստրատեգիայի մեծ երեք ուղղություն կա՝ կոշտ ուժ, փափուկ ուժ եւ խելացի ուժ. միայն առաջին միջոցը չպետք է կիրառենք՝ կոշտ ուժը, մյուսները ճնշման միջոցներ են, պետք է կիրառենք, եւ Հայաստանը դա անում է: Այսօր գրեթե բոլոր կառույցներն ընդգրկված են Արցախի հարցի լուծման, Լաչինի շրջափակման վերացման աշխատանքներին, բայց հասարակության մի հատված կա, որն ուզում է Հայաստանը ներքաշել ռազմական գործողությունների մեջ, բայց նման բան չի լինելու. Հայաստանը չպետք է նրքաշվի կոնֆլիկտի մեջ: Արցախը բլոկադայի է ենթարկել ռուս խաղաղապահ ուժը՝ ըստ եռակողմ հայտարարության 6-րդ կետի. այլ մեկնաբանություն չկա:

-Պարոն Շիրինյան, ասում եք՝ ճանապարհը Ռուսաստանն է փակել, ռուսական կողմի պարտավորությունն է բացել այն: Ստացվում է՝ Հայաստանը չունի՞ որեւէ պարտավորություն. ի վերջո, Հայաստանն է Արցախի անվտանգության երաշխավորը:

-Ունի, Հայաստանը պետք է փափուկ ուժի կիրառման միջոցով հարցը լուծի. փափուկ ուժը բոլոր հնարավոր միջոցներն են խնդրի լուծման համար, բացի ռազմական ուժից, իսկ Հայաստանը անում է ամեն ինչ Արցախի համար, նաեւ՝նյութական առումով: Շատ բաներ չեն ասվում, բայց արվում են հենց դիվանագիտական ուղղությամբ: Գերմանիայի կանցլերը հենց այնպես չէր հայտարարել ինքնորոշման իրավունքի մասին. դա Հայաստանի դիվանագիտական ծառայության հետ կապ ունի, դիտորդների: Մենք պետք է քաղաքական տերմինները եւ քաղաքագիտության խոսույթը լավ իմանանք, որպեսզի Ուկրաինայի մակարդակն ապահովենք հայրենիքի պաշտպանության հարցում: Հստակ կարող եմ ասել՝ Հայաստանը Լաչինի միջանցքի բացման համար կոշտ ուժով չի միջամտելու. ով ինչ ուզում է՝ ասի կամ անի, բայց մնացած ամեն քայլ հաջողությամբ անում է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

«ԱԿԱՄԱ ՆԱՅՈՒՄ ԵՄ ԱՉՔԵՐԻՍ ՄԵՋ»

ArmLur.am-ն արդեն հայտնել է, որ Արաբկիր վարչական շրջանի Տիգրանյան փողոցում միջադեպ է տեղի ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի մասնակցությամբ:

ArmLur.am-ի հետ զրույցում Հովիկ Աղազարյանը մանրամասներ է ներկայացրել միջադեպից. «Ես ամեն առավոտ գործի գալիս սափրվում եմ, սափրվելիս նայում եմ հայելու մեջ, կամա-ակամա նայում եմ նաեւ աչքերիս մեջ: Հիմա ես փողկապս կապեմ, այդ երեւույթի կողքով անտարբեր անցնեմ ու գամ գործի, հետո այդ երեւույթի պատճառով ստեղծված իրավիճակը դառնա վտանգավոր:

Մի երիտասարդ հայր իր մեքենայով շտապ իր երեխային բերի հիվանդանոց, մյուս կողմից էլ մի ուրիշ երեխա գա, ճանապարհը հատի, ու տեղի ունենա սարսափելին, ես հաջորդ օրը այսքանից հետո ո՞նց կարող եմ կանգնել հայելու դեմը ու նայել աչքերիս մեջ. ես այդ մարդը չեմ»:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՅՏՆԻ ԴԱՐՁԱՎ

Դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Հայկազ Բաղմանյանի նկատմամբ. որպես խափանման միջոց է ընտրված բացակայելու արգելքը:

Դատախազությունը հայտնում է, որ նախկին պաշտոնյան իր հայտարարագրերում թաքցրել է գույքերի եւ եկամուտների վերաբերյալ տվյալները: Նրա նկատմամբ ավելի վաղ նախաձեռնվել էր քրեական վարույթ:

Օրինակ, ըստ հաղորդագրության՝ 2018 թվականի հայտարարագրում նախկին բարձրաստիճան զինվորականը նշել է, որ իր անվամբ շարժական գույքեր առկա չեն, դրամական միջոցներ չունի, իսկ որպես եկամուտ հայտարարագրել է 6.43 դրամ, մինչդեռ 2017 թվականի դեկտեմբերի 5-ի դրությամբ նրա անվամբ հաշվառված են եղել 102 մլն 665 հազար դրամով ձեռք բերված «MERCEDES-BENZ S500L 4MATIC», «MERCEDES-BENZ S450 4MATIC» եւ «VAZ 21011» մակնիշների ավտոմեքենաներ: Պաշտոնը դադարեցնելու օրվա դրությամբ նրա բանկային հաշվեհամարներին առկա է եղել տարբեր արժույթներով շուրջ 2 մլն 37 հազար 125 դրամին համարժեք գումար, բացի այդ, նրա բանկային հաշվեհամարները համալրվել են շուրջ 174 մլն 358 հազար դրամով:

Գեներալ-լեյտենանտ Բաղմանյանը 2009 -2017 թվականներին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալի պաշտոնն է զբաղեցրել, ապա՝ 2018 -2020 -ին՝ ՀԱՊԿ միացյալ շտաբի պետի տեղակալի:

ԿՈՂՄ ԵՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻՆ

Երեկ Վրաստանի խորհրդարանը առաջին ընթերցմամբ ընդունեց «օտարերկրյա գործակալների մասին» վիճահարույց օրենքը:

Նկատենք, որ Վրաստանում ԱՄՆ-ի դեսպանությունը «սեւ օր» է համարել Վրաստանի ժողովրդավարության համար: Օրինագիծը քննադատող Վրաստանի ընդդիմությունը, մտավորականները, միջազգային կառույցները գտնում են, որ այդ օրենքը Վրաստանում կսահմանափակի ազատությունները:

Առաջին ընթերցմանը հաջորդելու են երկրորդ, ապա երրորդ ընթերցմամբ ընդունելու քվեարկությունները:

Օրինագծին կողմ է քվեարկել 76 պատգամավոր, դեմ՝ 13-ը:

Հարյուրավոր ցուցարարներ խորհրդարանի դիմաց բողոքի ցույց են անցկացնում օրինագծի դեմ: Ոստիկանությունը նրանց դեմ արցունքաբեր գազ եւ ջրանետ մեքենա է կիրառել: Այս նախագիծն արդեն Վենետիկի հանձնաժողով է ուղարկվել:

ՉԻ ԿԱՐՈՂ ՀԱՄՆԵԼ

«Ես ասել եմ եւ հիմա էլ կրկնում եմ՝ պետք է փոխվի բանակցողը. Չի կարող բանակցողը հասնել որեւէ հաջողության, երբ դիմացինը հրապարակավ իրեն համեմատել է կեղտոտ լաթի հետ, խմած, հարբած ծաղրածուի հետ. այդպիսի մարդը ինչո՞ւ պետք է լրջորեն խոսի ինչ-որ բանի մասին, այդպիսի մարդը պետք է միայն պահանջի»,- երեկ լրագրողների հետ զրույցում նշեց ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը:

«Երկրորդը՝ մենք իրականության մեջ ադրբեջանցիների հետ չենք բանակցել, բանակցել ենք միջնորդների հետ, որովհետեւ ադրբեջանցիների հետ բանակցելու բան չունենք: Իրենք ուզում են, որ ամեն ինչն իրենցը լինի ու դեռ մի բան էլ ավել: Իսկ միջնորդներնն ինչպե՞ս պետք է վերաբերվեն այն մարդուն, որը մեկ այստեղ է թռչում, մեկ այնտեղ, մեկ Պրահա, մեկ Մոսկվա: Դա փոխլրացման, եւ-եւ-ի քաղաքականություն չի, դա ճնշման տակ, կախված ճնշման ազդեցությունից, կարծիքի փոփոխություն է»,-ասաց նա:

Սերժ Սարգսյանը նկատեց, որ իրավիճակն անասելի դժվար կլինի այն անձի համար, որը փոխարինելու է ներկա բանակցողին, բայց իրավիճակը շտկել հնարավոր է:

ՉԵՆ ԿԱՐՈՂ ԶԵՆՔ ԿՐԵԼ

ՀՀ առողջապահության նախարարությունը հանդես է եկել նոր նախագծով. զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների եւ վիճակների ցանկը սահմանելու է Կառավարությունը: Նախագծով նախատեսվում է սահմանել զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների եւ վիճակների ցանկը եւ ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 2-ի N 489 որոշումը:

Ըստ այդ որոշման՝ զենքի տիրապետմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկն ունի հետեւյալ տեսքը՝

-հոգեկան խանգարումներ,

-նյարդային համակարգի հիվանդություններ եւ վնասվածքների հետեւանքներ, օրինակ՝ գլխուղեղի եւ ողնուղեղի վնասվածքների հետեւանքներ,

-ականջի, վերին շնչառական ուղիների հիվանդություններ, օրինակ՝ երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլ-համրություն,

-աչքի եւ նրա հավելումների հիվանդություններ, օրինակ՝ տեսողության սրության իջեցում,

- վիրաբուժական հիվանդություններ, օրինակ՝ ձեռքի մատների կամ դաստակների դեֆորմացիաներ, վնասվածքներ,

-խնդիրներ՝ կապված ապրելակերպի հետ, օրինակ՝ ինքնավնասումներ առաջացնող վարք:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՍՊԱՌՆՈՒՄ Է

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը կրկին մեղադրանքներ է ուղղել Ռուսաստանի ուղղությամբ:

Մասնավորապես, պաշտոնական Բաքուն կրկին հայտարարում է, թե Լաչինի միջանցքում անհրաժեշտ է վերահսկողության ռեժիմ ապահովել, ինչպես նաեւ սպառնում է ձեռնարկել վճռական, անհրաժեշտ միջոցներ՝ զինաթափելու եւ չեզոքացնելու անօրինական զինված կազմավորումները:

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարությամբ է հանդես եկել՝ նշելով.

«Եվս մեկ անգամ զգուշացնում ենք, որ Հայաստանի կողմից ռազմական բեռների փոխադրումը Ադրբեջանի տարածք, Հայաստանի զինված ուժերի անձնակազմի ուղարկումն ու ռոտացիան պետք է անհապաղ, մեկընդմիշտ դադարեցվի, հայկական զորքերը պետք է ամբողջությամբ դուրս բերվեն մեր երկրի տարածքից: Հակառակ դեպքում ադրբեջանական կողմը հարկադրված կլինի, օգտագործելով բոլոր հնարավորությունները, ձեռնարկել վճռական, անհրաժեշտ միջոցներ՝ զինաթափելու եւ չեզոքացնելու անօրինական զինված կազմավորումները: Հայաստանի նման գործողությունները դիտվում են որպես ռազմական ագրեսիայի շարունակություն»,- ասված է հայտարարությունում: Նշենք, որ Բաքուն մեղադրել է Ռուսաստանի պաշտպանության նախարարությանը՝ մարտի 5-ի զինված միջադեպի փաստերը խեղաթյուրելու, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ տարածելու համար: Բանն այն է, որ Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը երեկ հաստատել էր, որ կիրակի առավոտյան Արցախում տեղի ունեցած միջադեպի ընթացքում առաջինը հրազեն կիրառել է ադրբեջանական կողմը:

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ ԵՆ

Երեւանում են ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի ու ամերիկացի համանախագահները: Ֆրանսիացի համանախագահ Բրիս Ռոֆֆոյը երեկ արդեն հանդիպել է վարչապետին:

Նիկոլ Փաշինյանը, ըստ պաշտոնական հաղորդագրության, դիվանագետի հետ քննարկել է կիրակի Արցախում տեղի ունեցած ադրբեջանական հարձակումը, որի հետեւանքով 3 արցախցի ոստիկան է սպանվել:

Բաքվում ունեցած հանդիպումներից հետո՝ երեկ Երեւան ժամանած ամերիկացի համանախագահ Լուիս Բոնոն եւս հանդիպելու է վարչապետին:

Մարտի 7-ին Լուիս Բոնոն հանդիպեց Նիկոլ Փաշինյանի, կառավարության ներկայացուցիչների եւ այլոց հետ՝ առաջ մղելու Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության գործընթացը. հայտնում են Հայաստանում Միացյալ Նահանգների դեսպանատնից:

Բոնոն ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահի պաշտոնում մեկ ամիս առաջ է նշանակվել: Սա նրա առաջին այցն է տարածաշրջան:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ հանդիպմանը երեկ ամերիկացի բանագնացը, որը նաեւ Հարավային Կովկասում բանակցությունների հարցերով ԱՄՆ Պետդեպարտամենտի ավագ խորհրդականն է, հայտարարել էր՝ Վաշինգտոնի վերջնական նպատակը Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատումն է:

Ամերիկացի դիվանագետը կարեւորել է նաեւ Երեւանի եւ Բաքվի միջեւ ուղիղ շփումները՝ շեշտելով՝ իր այցի նպատակը երկխոսության ծավալումն է:

Ալիեւն էլ իր հերթին գոհունակություն էր հայտնել իր ու Հայաստանի ղեկավարի միջեւ փետրվարի 18-ին կայացած հանդիպման արդյունքների առթիվ: Մյունխենյան այդ հանդիպմանը Գերմանիայում ԱՄՆ պետքարտուղարի հետ միասին մասնակցում էր նաեւ Լուիս Բոնոն:

Ամերիկացի բանագնացի այցին ճեպազրույցի ընթացքում անդրադարձել է նաեւ պետքարտուղարության խոսնակը:

Նեդ Փրայսն ասել է, որ ամերիկացի դիվանագետը տարածաշրջանում է՝ «ընդգծելու, որ առաջընթացի միակ ճանապարհը ուղիղ երկխոսությունն ու դիվանագիտությունն է»:

«Եվ ինչպես ընդգծել է պետքարտուղարը, Միացյալ Նահանգները հավատարիմ է Հայաստան-Ադրբեջան խաղաղ բանակցություններին», - ասել է Փրայսը:

Անդրադառնալով կիրակի օրն Արցախում տեղի ունեցած արյունալի միջադեպին՝ պետքարտուղարության ներկայացուցիչը շեշտել է՝ հակամարտությունը չի կարող ունենալ ռազմական լուծում:

Փրայսը ընդգծել է նաեւ, որ Միացյալ Նահանգները չի պատրաստվում դեմ լինել միջնորդական որեւէ առաջարկի, այդ թվում՝ ռուսականին: Նա նշել է, որ Վաշինգտոնը ոչ թե միջնորդ է, այլ Երեւանի եւ Բաքվի գործընկերը:

«Կարծում եմ՝ մենք եւ՛ խոսքով, եւ՛ գործով ցույց ենք տվել երկու երկրների հետ մեր հարաբերությունների բնույթը, երկու երկրներին միավորելու մեր կարողությունը, մեր ցանկությունն ու պատրաստակամությունը՝ օգնելու լրացուցիչ առաջընթաց ապահովել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերություններում: Մենք դա չենք անում որպես Մոսկվայի հետ մրցելու միջոց, մենք դա անում ենք՝ ձգտելով հասնել այս երկու երկրների միջեւ երկարատեւ վեճի կարգավորմանն ու լուծմանը, ցավոք, մի վեճի, որը հետեւողականորեն մարդկային կյանքեր է խլում, ինչպես եղավ մարտի 5-ին», - ասել է Պետդեպարտամենտի խոսնակը:

Փետրվարին էլ տարածաշրջան էր այցելել ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ, Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների կարգավորման գծով Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հատուկ պատվիրակ Իգոր Խովաեւը, հանդիպել Նիկոլ Փաշինյանին ու Իլհամ Ալիեւին:

Ռուսաստանցի դիվանագետը, կողմերի տարածած պաշտոնական հաղորդագրությունների համաձայն, Հայաստանի ու Ադրբեջանի առաջնորդների հետ քննարկել էր Երեւանի ու Բաքվի միջեւ հարաբերությունների կարգավորման հարցը:

Ն.Հ.

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ՝ ԱՅՍՕՐ

Նախօրեին երկարատեւ ծանր հիվանդությունից հետո մահացել է քաղաքական գործիչ, ՀՀ պաշտպանության նախարարի նախկին տեղակալ, ՀՀ Ազգային ժողովի 5-րդ գումարման պատգամավոր Արտակ Դավթյանը: Նրա հոգեհանգիստը տեղի կունենա մարտի 8-ին Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում:

ԱԴԱՄ ՇԻՖԻ ԿԱՐԾԻՔԸ

Ադրբեջանական զինուժի հարձակումը, որի հետեւանքով զոհվել է արցախցի 3 ոստիկան, դիտավորյալ սպանության եւս մեկ գործողություն է. Վաշինգտոնը պետք է իր դիվանագիտական ուղիներն օգտագործի տարածաշրջանում անկայունությունը հարթելու համար: Նման հայտարարություն է արել ԱՄՆ կոնգրեսական Ադամ Շիֆը: Նա շեշտել է, որ արցախցի ոստիկանների սպանությունից հետո էլ ավելի մեծ անհրաժեշտություն է առաջանում պատժամիջոցներ սահմանել Ադրբեջանի դեմ «նրանց կողմից մարդու իրավունքների եւ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի խախտման համար»:

ԸՆԴՈՒՆԵԼ Է ԲՐԻՍ ՌՈՔՖՈՅԻՆ

Մարտի 7-ին ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն ընդունել է Հարավային Կովկասի հարցերով հատուկ հանձնակատար, ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բրիս Ռոքֆոյին:

Զրուցակիցները քննարկել են Լաչինի միջանցքի շուրջ ստեղծված եւ դրա հետեւանքով Լեռնային Ղարաբաղում առաջացած հումանիտար ծանր իրավիճակը: Կողմերն ընդգծել են Արդարադատության միջազգային դատարանի կողմից Լաչինի միջանցքի բացման առնչությամբ կայացված իրավաբանական պարտադիր ուժ ունեցող որոշումն ի կատար ածելու անհրաժեշտությունը:

Ախ քարտուղարն իր զրուցակցի ուշադրությունն է հրավիրել մարտի 5-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Լեռնային Ղարաբաղում իրականացված ահաբեկչական հարձակման դեպքին եւ ընդգծել միջազգային ներկայության անհրաժեշտությունը ԼՂ-ում եւ Լաչինի միջանցքում:

ԿԱՆԱՅՔ ՊԱՐԳԵՒԱՏՐՎԵԼ ԵՆ

ArmLur.am-ը ԱԺ-ից տեղեկացավ, որ, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի որոշմամբ, կանանց տոնի կապակցությամբ Ազգային ժողովի կին պատգամավորները եւ կին աշխատողները պարգեւատրվել են վաթսուն հազար դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՇՈՒՐՋ 4,8 ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ ՀԱՓՇՏԱԿԵԼՈՒ ԴԵՊՔ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ֆնված ֆրեական վարույթով կատարված նախաքննությամբ բացահայտվել է «Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից վատնման եղանակով պետական միջոցներից ընդհանուր շուրջ 4,8 մլն ՀՀ դրամ հափշտակելու դեպք:

Մասնավորապես, պարզվել է, որ Ա. Հ.-ն, 2013 թվականի հուլիսի 29-ից 2020 թվականի մայիսի 13-ը զբաղեցնելով հիշյալ դպրոցի տնօրենի պաշտոնը, վատնման եղանակով պետական միջոցներից հափշտակություն կատարելու դիտավորությամբ 2016 թվականի տարբեր ամիսներին իր մորաքրոջ տղային եւ դպրոցի հաշվապահ Մ. Ս.-ի բարեկամին նշանակել է համապատասխանաբար դպրոցի պահակի եւ հավաքարարի հաստիքներին: Վերջիններս, սակայն, երբեւէ դպրոցում աշխատանքի չեն ներկայացել եւ աշխատանքային պարտականությունները չեն կատարել: Չայած այդ հանգամանքին՝ 2016-2020 թվականների ընթացքում հաշվարկվել եւ հիշյալ անձանց վճարվել է ընդհանուր 4.791.680 ՀՀ դրամ աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարներ, որոնք տնօրեն Ա. Հ.-ն, պաշտոնեական դիրքն օգտագործելով, հաշվապահ Մ. Ս.-ի օժանդակությամբ վատնման եղանակով հափշտակել է:

Նախաքննությամբ պարզվել է նաեւ, որ տնօրեն Ա. Հ.-ն հավաքարարի եւ պահակի հաստիքներին հրամանագրված հիշյալ անձանց կողմից աշխատանքի չներկայանալու, ինչպես նաեւ վատնման եղանակով պետական միջոցներից հափշտակություն կատարելու հանգամանքները քողարկելու անձնական դրդումներով հաշվապահ Մ. Ս.-ի հետ կատարել են պաշտոնեական կեղծիքներ, մասնավորապես՝ իրենց ստորագրությամբ յուրաքանչյուր ամիս հաստատել են դպրոցի աշխատողների աշխատավարձերի հաշվարկման ցուցակները, որոնցում ներառվել են ակնհայտ կեղծ տեղեկություններ այն մասին, թե, իբր, նշված անձինք հաճախել են աշխատանքի, եւ նրանց անվամբ հաշվարկվել է ամսական աշխատավարձ:

Վատնման եղանակով պետական միջոցներից ընդհանուր 4.791.680 ՀՀ դրամ հափշտակելու եւ պաշտոնեական կեղծիք կատարելու համար Ա. Հ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (երկու դրվագ) եւ 314-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Մ. Ս.-ին՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (երկու դրվագ) եւ 314-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության ընթացքում պետությանը պատճառված ամբողջ վնասը վերականգնվել է: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՎԵՐԱԴԱՐՁԱԾ

ԳՈՒՄԱՐԻ ԴԻՄԱՑ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ Է ՓՈԽԱՆՑԵԼ

ՀՀ ՊՆ N զորամասի նյութատեխնիկական ապահովման գծով հրամանատարի տեղակալ Ա.Ն.-ն՝ մայորի զինվորական կոչումով, 2021 թվականի հուլիսին Սյունիքի մարզի Իշխանասար կոչվող տեղանքում մարտական դիրքեր սնունդ տեղափոխելու ընթացքում եղանակային վատ պայմանների պատճառով «Սեւ լիճ» կոչվող հատվածում մեկ այլ զինծառայող Ա.Տ.-ի հետ միասին «Ուրալ» մակնիշի մեքենայով հայտնվել է հակառակորդի կողմից վերահսկվող տարածքում, գերեվարվել եւ տեղափոխվել է Քաֆու. այս մասին հայտնում են ՀՀ դատախազության հանրային կապերի բաժնից:

Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում իրականացված նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել, որ Ա.Ն.-ն, մինչեւ 2021 թվականի սեպտեմբերի 7-ը գտնվելով գերության մեջ, Բաքվի բանտերից մեկում գրավոր համաձայնագիր է ստորագրել՝ համագործակցելու օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ: Նույն թվականի սեպտեմբերի 7-ին Ա.Ն.-ն վերադարձել է Հայաստան եւ 2021 թվականի դեկտեմբերին նշանակվել է կոմունալ շահագործման ծառայության պետ ՊՆ N զորամասում: Պաշտոնավարման ընթացքում Ա.Ն.-ն, հավաքագրվելով օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից, օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցչին է հանձնել պետական գաղտնիք հանդիսացող տվյալներ՝ այդկերպ կատարելով պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության՝ որպես վարձատրություն ստանալով 20 հազար 200 ԱՄՆ դոլար գումար: 2023 թվականի փետրվարի 28-ին հսկող դատախազը որոշում է կայացրել N զորամասի համապատասխան պաշտոնյայի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասով (պետական դավաճանություն) հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին. Ա.Ն.-ին ներկայացվել է մեղադրանք: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ 2023 թվականի մարտի 6-ին, հսկող դատախազի որոշմամբ, մեղադրական եզրակացությունը հաստատվել, քրեական վարույթի նյութերը հանձնվել են Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԼՈՒՐԵՐ

ԻՆՉՆ Է ԵՂԵԼ ՊԱՏՃԱՌԸ

Մարտի 4-ին արտակերգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 20:10-ին Երեւանի 103 շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը Խանջյան 33 հասցեում գործող «Կոկտեյլ» հոթելից «ծայրահեղ ծանր» ախտորոշմամբ Թիվ 1 համալսարանական հիվանդանոց է տեղափոխել դանակահարված մի քաղաքացու, որը մարտի 5-ին հիվանդանոցում մահացել էր: Վերջինս Արագածոտնի մարզի բնակիչ 30-ամյա Թաթուլ Մարգարյանն էր:

Ըստ shamshyan.com-ի՝ կասկածյալը Երեւանի բնակիչ 21-ամյա Էրիկ Շահնազարյանն է: Իսկ ի՞նչն էր եղել դանակահարության պատճառը: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ մահացածը՝ Արագածոտնի մարզի բնակիչ 30-ամյա Թաթուլ Մարգարյանը, հունվարի 31-ին իրավապահներին բողոք է ներկայացրած եղել Երեւանի բնակիչ 21-ամյա Էրիկ Շահնազարյանի դեմ, որը իրավապահները ընդունել են վարույթ: Անցել է մի քանի ամիս, եւ Էրիկ Շահնազարյանը, հանդիպելով Թաթուլ Մարգարյանին, պահանջել է բողոքը հետ վերցնել. ստանալով մերժում՝ դանակով հարվածել եւ կյանքից զրկել է Թաթուլ Մարգարյանին: Դեպքի փաստով քննչական բաժնում սպանության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԻՏԱՎՈՐՅԱԼ ՎՐԱԵՐԹ

2023թ.-ի մարտի 6-ին՝ ժամը 17:20-ին, ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 13:30-ի սահմաններում, Կապան քաղաքի Ջորք թաղամասի շենքերից մեկի հարեւանությամբ նույն քաղաքի 51-ամյա բնակիչը իր «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով դիտավորությամբ, ապօրինաբար կյանքից զրկելու նպատակով վրաերթի է ենթարկել նախկին կնոջը՝ պատճառելով մարմնական վնասվածքներ եւ թողնելով անօգնական վիճակում: Նույն օրը ստացվել է նաեւ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ահազանգն այն մասին, որ «գլխուղեղի ցնցում, դեմքի աջ եւ ձախ վերջույթների սալջարդ վերքեր» ախտորոշմամբ իրենց մոտ է տեղափոխվել վերոնշյալ կինը: 51-ամյա տղամարդու նախկին կինը ճանաչվել է տուժող, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Կապան քաղաքի 51-ամյա բնակիչը ձերբակալվել է՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով: Նշենք, որ 51-ամյա տղամարդը 2014թ. մայիսի 30-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել նույն թվականի մարտի 13-ին ընտանեկան հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ իրեն ամրակցված «MP654-K» մոդելի օդաճնշիչ ատրճանակից նախկին կնոջ դեմքի եւ գլխի ուղղությամբ կրակոցներ արձակելու, ձեռքով եւ ոտքերով վերջինիս հարվածներ հասցնելու՝ առողջությանը թեթեւ վնաս պատճառելու համար, եւ, որպես պատիժ, նշանակվել է տուգանք: Եվս մեկ՝ 2016թ. սեպտեմբերի 23-ին կայացված դատավճռով՝ կնոջը հոգեբանական հարկադրանքի ձեւով վախեցնելու նպատակով սպանության սպառնալիքներ տալու, վախի, տագնապի, անհանգստության զգացում առաջացնելու համար առաջադրված մեղադրանքում 51-ամյա տղամարդն արդարացվել է: Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 81 դեպք, որոնցից 6-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ՓՈՐՁՈՒՄ Է ՍԵՐՎԻՏՈՒՏ ԿԻՐԱՌԵԼ

2019թ. փետրվարի 11-ին «Իջեւանի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Էմիլ Ամիրխանյանը դիմել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ընդդեմ ՀՀ Տավուշի մարզի Աչաջուր համայնքի, Արսեն Սամվելի Մնացականյանի, Սիրամարգ Սարգսի Մնացականյանի, Արշակ Արսենի Մնացականյանի, Աննա Արսենի Մնացականյանի, Սերոժ Լեւոնի Խոջանյանի, Արթուր Սերոժի Խոջանյանի, «Սլովակիա» ՍՊԸ, ՀՀ Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքի, երրորդ անձ՝ « Տավուշ հոլդինգ» ՍՊԸ՝ խնդրելով հողամասը ծանրաբեռնել սերվիտուտով, որն իր մեջ ներառում է M14 հանրապետական նշանակության ճանապարհից մինչեւ Տավուշի մարզի Ակնաղբյուրի ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի 1PC հորատանցք անհրաժեշտ տարածքով անցնելը եւ հորատանցքով զբաղեցրած 100 քմ տարածքի օգտագործում՝ խողովակաշար անցկացնելու, անհրաժեշտ սարքավորումներ տեղադրելու (այդ թվում՝ հորատանցքի բերանի շուրջ ֆունդամենտի հուսալի հիդրոիզոլյացիա, հորատացանքի գլխամասի կահավորում համապատասխան սարքավորումներով (փականներ, չափիչ սարքեր, կապարակնքված ջրաչափեր, գազանջատիչ, ջրհավաք), հորատանցքի կառուցապատում սանիտարական պահպանության առաջին (խիստ ռեժիմի) գոտիով, այլ անհրաժեշտ սարաքավորումների տեղադրում) համար: Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2019թ. փետրվարի 14-ի որոշմամբ՝ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Նույն դատարանի 2022թ. փետրվարի 2-ի վճռով՝ հայցը մերժվել է: Իջեւանի գինու, կոնյակի գործարանը դիմել է ՀՀ վերաքննիչ դատարան. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշմամբ՝ բողոքն ընդունվել է վարույթ, որոշվել է բողոքի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով: 2022թ. հունիսի 14-ին Վերաքննիչ դատարանը որոշել է վերաքննիչ բողոքը մերժել, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2022թ. փետրվարի 2-ի վճիռը թողել անփոփոխ: Իջեւանի գինու, կոնյակի գործարանը վճռաբեկ բողոք է ներկայացրել: 2022թ դեկտեմբերի 9-ին Վճռաբեկ դատարանը որոշել է վճռաբեկ բողոքը բավարարել մասնակի, բեկանել ՀՀ վերաքննիչ դատարանի 2022թ. հունիսի 14-ի որոշումը ու գործն ուղարկել ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ամբողջ ծավալով նոր քննության: Սույն քաղաքացիական հայցով Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Նոյեմբերյան քաղաքի նստավայրում, դատավոր Նարինե Անանյանի նախագահությամբ, 2023թ. փետրվարի 23-ից կայացել են նախնական դատական նիստեր. հերթական դատական նիստը նշանակված է մարտի 23-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

ՆՇԱՆԱԿՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատվել է պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը:



ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ ուսումնական հաստատության կառավարման նոր մոդելով ուսումնադաստիարակչական եւ վարչական գործընթացների կառավարումը վերապահված է տարբեր ղեկավարների. ուսումնադաստիարակչական գծով գործադիր մարմինը տնօրենն է, իսկ վարչական, տնտեսական եւ ֆինանսական գծով՝ վարչատնտեսական մասի համակարգողը: Վերջինս ուսումնական մասի տնօրենի հետ իրականացնում է միայն ուսումնական գործընթացի պլանավորում եւ անհրաժեշտ պայմանների ապահովում:

Երկու ղեկավարների լիազորությունների, պարտականությունների ու պատասխանատվության մասին դրույթները սահմանված են օրենքով, եւ աշխատանքներն իրականացվում են համագործակցային մեխանիզմով:

Հաշվի առնելով համակարգողի գործառույթների եւ պատասխանատվության շրջանակը՝ կարեւորվում է նաեւ վերջինիս նշանակումը մրցութային կարգով՝ հստակ պահանջների առկայության պարագայում:

Նշանակման ընթացակարգ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կամ մարզպետարանի կամ Երեւանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումը, ըստ ենթակայության, տվյալ հաստատության համակարգողի պաշտոնավարման ժամկետը լրանալու օրվանից սկսած՝ առավելագույնը 30, բայց ոչ պակաս, քան 25 աշխատանքային օր առաջ հայտարարում է համակարգողի պաշտոնի թափուր տեղը համալրելու համար մրցույթ:

Լիազորված մարմինը համակարգողի թափուր պաշտոն առաջանալու օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում, կազմակերպում եւ իրականացնում է համակարգողի պաշտոնի թափուր տեղի նշանակում:

Լիազորված մարմինը հաստատության համակարգողի պաշտոնի թափուր տեղը համալրելու մասին հայտարարությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման www.azdarar.am, ԿԳՄՍ նախարարության, իսկ մարզպետարանների եւ Երեւանի քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների դեպքում՝ վերջիններիս կայքերում:

Թափուր տեղը համալրելու համար հայտերն ընդունում է տվյալ լիազորված մարմնի համապատասխան ստորաբաժանումը: Մասնակցության հայտերի բացակայության դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է նոր հայտարարություն:

Համապատասխան ստորաբաժանումը հայտերն ընդունելու ժամկետն ավարտվելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, հավակնորդի փաստաթղթերը ներկայացնում է լիազորված մարմնի ղեկավարին:

Վերջինս հավակնորդների փաստաթղթերը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ուսումնասիրում է դրանք, որոնց հիման վրա՝ հավակնորդներից մեկի հետ (եթե դրանց թիվը մեկից ավելի է) կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան անձի 65 տարին լրանալը:

Մասնակիցներից որեւէ մեկի՝ սահմանված չափանիշներին չհամապատասխանելու դեպքում թափուր տեղի համալրման համար 3 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է նոր հայտարարություն:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԹՎԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանը 2023 թվականի հունվարին արտահանել է 572 մլն 778.3 հազար դոլարի ապրանք, որը 2.3 անգամ աճել է նախորդ տարվա հունվարի նկատմամբ. այս մասին են վկայում ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները:

Հայաստանը հունվարին ամենաշատ արտահանումն իրականացել է դեպի Ռուսաստան՝ 354 մլն 925.1 հազար դոլարի, ինչը նախորդ տարվա հունվարի նկատմամբ աճել է 5.2 անգամ: Արտահանման ծավալներով երկրորդ տեղում Արաբական Միացյալ Էմիրություններն է. հունվարին արտահանվել է 46 մլն 563 հազար դոլարի ապրանք. նախորդ տարվա հունվարի նկատմամբ այն աճել է 14.1 անգամ: Այնուհետեւ ամենաշատ արտահանումն իրականացվել է Չինաստան՝ 40 մլն 458.4 հազար դոլարի՝նախորդ տարվա նկատմամբ աճելով 12 տոկոսով:

Հայաստանից մեծ ծավալով արտահանում է իրականացվել նաեւ դեպի Նիդերլանդներ՝30 մլն 175 հազար դոլարի, 2022-ի հունվարի նկատմամբ ցուցնիշն աճել է 29.5 տոկոսով: 25.5 տոկոսով աճել է նաեւ Իրաք արտահանումը՝ կազմելով 19 մլն 563.5 հազար դոլար:

Հարեւան Վրաստան արտահանումը 2023 թվականի հունվարին նվազել է 11.5 տոկոսով՝ կազմելով 6 մլն 591.9 հազար դոլար:

Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ երկրներ արտահանման ծավալը հունվարին կազմել է 371 մլն 305.9 հազար դոլար՝2022-ի հունվարի նկատմամբ աճելով 5.2 անգամ, իսկ ԵՄ երկրներ հունվարին արտահանվել է 54 մլն 081.4 հազար դոլարի արտադրանք՝նախորդ տարվա հունվարի նկատմամբ նվազելով 4.3 տոկոսով:

Հայաստանից արտահանման ծավալներում ամենամեծ մասնաբաժինն ունեն վերգետնյա, օդային եւ ջրային տրանսպորտի միջոցները՝ 190 մլն 805 հազար դոլարի. այն նախորդ տարվա հունվարի նկատմամբ աճել է 97.1 անգամ: Թեեւ արտահանման ծավալներում երկրորդ ամենամեծ մասնաբաժինն ունի հանքահումքային արտադրանքը՝72 մլն 646.8 հազար դոլարի, սակայն ցուցանիշը, նախորդ տարվա հունվարի համեմատ, նվազել է 15.7 տոկոսով: Արտահանման ծավալներով երրորդը թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերն են, թանկարժեք մետաղները եւ դրանցից պատրաստված իրերը. հունվարին արտահանվել է 64 մլն 867.4 հազար դոլարի, աճը 2022-ի հունվարի նկատմամբ 99.3 տոկոս է:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

Team Telecom Armenia

ՁԵՌՔ Է ԲԵՐԵԼ ՀՅՈՒՐԱՆՈՑ

«Գրանդ հոթել Երեւան» հյուրանոցի նոր սեփականատեր է դարձել «Թիմ» ընկերությունների խումբը. այս մասին հայտնել են իտալական «Ռենկո» ընկերության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Անդրեա Դելլասանտան եւ «Թիմ» ընկերությունների խմբի տնօրենների խորհրդի նախագահ Ալեքսանդր Եսայանը երեկ կայացած մամուլի ասուլիսին:

Ամփոփելով նախորդ 25 տարիների՝ հյուրանոցի գործունեությունը՝ Անդրեա Դելլասանտան նշեց, որ այն «Ռենկո»-ի պատմության մեջ նշանակալի դեր ունի:

«1998-ին՝ հյուրանոցը ձեռք բերելուց հետո, մենք նախաձեռնեցինք դրա վերակառուցումը՝ պահպանելով այն նախնական տեսքը, որն ունեցել էր այս պատմական շենքը: Այս գործարքով հյուրանոցի պատմության մեջ նոր էջ է բացվում»:

2004 թվականին «Երեւան» հյուրանոցը դարձել է «Գոլդեն Թուլիփ» հյուրանոցային ցանցի անդամ, իսկ 2013-ից մինչեւ 2016 թվականը միացել նույն ընտանիքի «Ռոյալ Թուլիփ» բարձրակարգ հյուրանոցների ցանցին որպես 5-աստղանի հյուրանոց եւ վերանվանվել «Ռոյալ թուլիփ Գրանդ հոթել Երեւան»: 2016 թվականից մինչ օրս հյուրանոցը մաս է կազմում Small Luxury Hotels of the World ցանցին եւ կոչվում «Գրանդ հոթել Երեւան»:

««Երեւան» հյուրանոցը 95 տարի եղել է մեր մայրաքաղաքի խորհրդանիշը եւ այդպես էլ կմնա՝ շարունակելով ծառայել այն նպատակին, որի համար կառուցվել է: Մենք անելու ենք ամեն ինչ հյուրերի բացառիկ փորձառությունն ապահովելու եւ նրանց երեւանյան հանգիստը հիշարժան ու հաճելի դարձնելու համար»,- իր խոսքում ասաց «Թիմ» ընկերությունների խմբի տնօրենների խորհրդի նախագահ Ալեքսանդր Եսայանը՝ հավելելով, որ սեփականատիրոջ փոփոխությունից հետո հյուրանոցի անձնակազմի փոփոխություն չի նախատեսվում:

Նշենք, որ երկու ընկերությունների միջեւ գործարքն իրականացվել է «Ակբա» բանկի ֆինանսավորմամբ:

«Թիմ» ընկերությունների խմբին են պատկանում նորարարական, ինժեներական ու տեխնոլոգիական լուծումներ առաջարկող Team Telecom Armenia, Team Systems, Team Solutions, TeamPay ընկերությունները, ինչպես նաեւ Buy.am առցանց մոլը:

ԱՌԱՋԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է «ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» ԿԵՆՏՐՈՆԸ

Ստեփանակերտում բացվել է «Մեր սարերը» կենտրոնը, որը դառնալու է ֆնարկումների, բանավեճերի, նոր գաղափարների ու ծրագրերի ներկայացման վայր: Կենտրոնում տեղի են ունեցել առաջին ֆնարկումները, ներկայացվել է հաղորդակցության այլընտրանքային համակարգի ներդրման նոր ծրագիրը: Շրջափակման պայմաններում արցախցիները զրկված են կենսական կարեւորության ռեսուրսներից, այդ թվում՝ որակյալ կապից: «Մենք ենք մեր սարերը» տարածքային գործակալության կողմից պետական-մասնավոր համագործակցությամբ իրականացվող այս ծրագրի հիմնական նպատակը նույնիսկ համացանցի արգելափակման պայմաններում բնակչության համար հաղորդակցության հուսալի ու որակյալ միջոցի ապահովումն է:

Գործակալության Արցախի նախագծերի ղեկավար Գրիգորի Մարտիրոսյանը ներկայացրել է ծրագրի ընթացքն ու նշանակությունն Արցախի բնակչության համար:

«Նպատակն է ունենալ այնպիսի համակարգ, որը նույնիսկ ինտերնետային շրջափակման պայմաններում Արցախի բնակիչների համար հաղորդակցության այլընտրանքային եւ հուսալի միջոց կդառնա: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալում ենք, որ կապի բոլորովին նոր հնարավորություններ կստեղծվեն Արցախի համար»,- ասել է Գրիգորի Մարտիրոսյանը:

Կենտրոնում կազմակերպված մյուս քննարկումը վերաբերել է Արցախի անվտանգության հարցերին, ներկայացվել է Highgate Consultanցy սոցիոլոգիական ընկերության՝ 2022թ. դեկտեմբերին եւ 2023թ. հունվարի վերջին եւ փետրվարի սկզբին Արցախում անցկացված սոցիոլոգիական հետազոտության՝ անվտանգությանը վերաբերող հատվածը: Հետազոտությունը բավականին համապարփակ է եւ ներառում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են Արցախի անվտանգությունը, քաղաքացիական մասնակցությունը պետական կառավարմանը, կանանց ներգրավվածությունը քաղաքական կյանքում, սփյուռքահայերի հետ փոխհարաբերությունները, ինքնությունն ու կրթությունը, սոցիալական հավասարությունը եւ այլն:

«Մենք ենք մեր սարերը» տարածքային գործակալության համահիմնադիր, Արցախի Հանրապետության նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը նշել է, որ ցանկացած ծրագիր իրականացնելուց առաջ շատ կարեւոր է հասկանալ ժողովրդի մոտեցումը, հիմնական մտահոգություններն ու խնդիրները, որպեսզի ծրագրերը լինեն թիրախային՝ ուղղված նրանց կենսական խնդիրների լուծմանը: Այդ սկզբունքով է առաջնորդվում «Մենք ենք մեր սարերը» գործակալությունը:

Անդրադառնալով «Մեր սարերը» կենտրոնի գործունեությանը՝ Ռուբեն Վարդանյանը նշել է, որ այն դառնալու է քննարկումների, բանավեճերի, նոր գաղափարների ու ծրագրերի ներկայացման, հասարակական, մշակութային, կրթական տարբեր միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարթակ: Քննարկումները հիմնականում երկու ուղղություն են ընդգրկելու՝ փորձագիտական, ռազմավարական վերլուծություններ եւ իրականացվող ծրագրերի ընթացքի ու արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ:

«Այս ճգնաժամի պայմաններում կարեւոր է ունենալ մի վայր, որը հնարավորություն կտա համագործակցության մեխանիզմ գործարկել մասնավոր եւ պետական հատվածների միջեւ: Վստահ եմ՝ թե՛ ներսում, թե՛ դրսում միասնականությունը միակ ճանապարհն է, որը թույլ կտա հաղթահարել այս մարտահրավերները»,- ասել է Ռուբեն Վարդանյանը:

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

ՎԱՐԿԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՎՃԱՐԵԼ ՀԱՅՓՈՍՏՈՒՄ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը հնարավորություն է ընձեռել ֆիզիկական անձ հաճախորդներին համալրել հաշիվները, ավանդները եւ վճարել վարկերը Հայփոստ փոստային կապի ազգային օպերատորի բաժանմունքներում: Բոլոր գործարքներն իրականացվում են ազգային արժույթով՝ ՀՀ դրամով: Մեկ օրվա ընթացքում գործարքների քանակը սահմանափակված չէ:

Հայփոստի փոստային բաժանմունքներում ընթացիկ հաշիվը, քարտը կամ ավանդը համալրելու համար հաճախորդը պետք է նշի միայն քարտային, բանկային հաշվեհամար կամ ավանդային պայմանագրի կոդ, իսկ վարկ վճարելու համար՝ վարկի կոդ: Բոլոր բանկային գործառնությունները կատարվում են ակնթարթորեն՝ համաձայն աշխատանքային գրաֆիկի:

Փոխանցման գումարը կազմում է 1000 ՀՀ դրամից մինչեւ 400 հազ. ՀՀ դրամ:

«Բանկի համար առաջնահերթ է «ՎՏԲ-Հայաստան» բանկի պրոդուկտների եւ ծառայությունների հասանելիությունը եւ օգտագործման պարզությունը, այդ նպատակով մենք մշտապես բարելավում ենք մեր հեռահար ծառայությունների եւ մասնաճյուղերում ֆիզիկապես սպասարկվելու հնարավորությունները: Փոստային կապի ազգային օպերատորի հետ մեր համագործակցությունը բնակչությանը հնարավորություն կտա ընտրել բանկի հետ համագործակցելու ամենահարմար ձեւաչափերը: Ծառայությունը հատկապես օգտակար կլինի նոսր բնակեցված տարածքների հաճախորդների համար, որտեղ չկան բանկի մասնաճյուղեր կամ ցանցին միանալու հնարավորություն օնլայն բանկից օգտվելու համար»,- նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի-տնօրինության նախագահի տեղակալի ժ/պ Տարաս Կլադչենկոն:

Նոր ծառայության մասին ավելին կարող եք իմանալ «ՎՏԲ-Հայաստան» բանկի պաշտոնական կայքում կամ բանկի Կոնտակտային կենտրոնում 8787 հեռախոսահամարով, ինչպես նաեւ Հայփոստի պաշտոնական կայքում կամ զանգահարելով 010514514 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱԲԱԹ

ԽՆԿՈ ԱՊՈՐ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում տարվա ընթացքում իրականացվում են բազմաբովանդակ ծրագրեր: Ինչպես տեղեկանում ենք ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից, տարբեր տարիքային խմբի երեխաներ մասնակցում են շուրջ 200 կրթական, մշակութային ծրագրերի եւ միջոցառումների:

Կրթամշակութային ծրագրերի հիմնական նպատակն է արժեւորել գիրքն ու ընթերցանությունը, նպաստել ընթերցելու մշակույթի ձեւավորմանն ու զարգացմանը, նպաստել գիրքը որպես մշակութային արժեք եւ մտավոր զարգացման միջոց դիտարկելու գիտակցմանը:

Կրթամշակութային ծրագրեր

Գրադարանի միջոցառումների շարքում հատկանշական է առանձնացնել ավանդաբար անցկացվող «Գրքի եւ երաժշտության շաբաթ», «Ազգային գրադարանային շաբաթ», «Արեւմտահայ գրականության միամսյակ», «Գիրք նվիրելու օր», «Մայրենի լեզվի միջազգային օր», «Մանկապատանեկան գրքի երեւանյան ցուցահանդես-տոնավաճառ», «Գրադարանավարի օր», «Մանկական գրքի միջազգային օր», «Երեխաների պաշտպանության միջազգային օր» ծրագրերը: Դրանց շրջանակում իրականացվում են տարաբնույթ միջոցառումներ, այդ թվում՝ գրքի ընթերցում-քննարկումներ, հեղինակների հետ հանդիպումներ, վարպետության դասեր, գրքային ցուցահանդեսներ, թատերական եւ տիկնիկային ներկայացումներ՝ գրադարանի թատերական խմբակի սաների մասնակցությամբ, նկարչական ցուցահանդեսներ, տարվա հոբելյարներին նվիրված միջոցառումներ եւ այլն:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանում

Մշակութային միջոցառումների շարքում իրականացվում է նաեւ «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանումը մանուկների եւ պատանիների շրջանում» ծրագիրը, որի շրջանակում անցկացվում են վարպետության դասեր, թեմատիկ քննարկումներ, մշակութային այցեր:

Ծրագրի նպատակն է ոչ նյութական մշակութային ժառանգության կարեւորման եւ արժեւորման գիտակցության ձեւավորումը մանուկների եւ պատանիների շրջանում, ինչպես նաեւ ոչ նյութական մշակութային ժառանգության ճանաչելիության մեծացումն ու հանրահռչակումը նոր սերնդի շրջանում: Կարեւորելով գրադարանի դերն ու նշանակությունը սերունդների ձեւավորման գործում, ինչպես նաեւ ժամանակակից տեխնոլոգիական աշխարհում երեխաներին գրքին ու ընթերցանությանը մոտեցնելու նոր մեթոդների ու գաղափարների ներդրման անհրաժեշտությունը՝ գրադարանն իրականացնում է նաեւ տարաբնույթ կրթական ծրագրեր: Դրանց նպատակն է երեխաների արտադպրոցական ոչ ֆորմալ կրթության ապահովումը, բազմակողմանի զարգացումը եւ գիտելիքների ձեռք բերման այլընտրանքային միջոցների ստեղծումն ու կիրառումը:

Գրադարանի կրթական ծրագրերի շարքում հատկանշական է առանձնացնել հետեւյալ ծրագրերը՝

«Ամառային, աշնանային, գարնանային ճամբարներ»

Նախատեսված է 6-12 տարեկան երեխաների համար, այդ թվում՝ խոցելի խմբի երեխաների համար: Այս ծրագրի շրջանակում կազմակերպվում են հետաքրքիր, ուսուցողական, կրթական եւ մշակութային պարապմունքներ, ճանաչողական այցեր թանգարաններ, թատրոններ, ցուցահանդեսներ եւ Հայաստանի պատմամշակութային վայրեր: Ծրագրի նպատակն է երեխաների ամառային հանգստի, հետաքրքրաշարժ ու բազմակողմանի ժամանցի արդյունավետ կազմակերպումը:

«Գրքի ճամբար մարզերի երեխաների համար»

Նախատեսված է 6-12 տարեկան երեխաների համար: Ծրագրի շրջանակում իրականացվում են գրքի ընթերցում-քննարկումներ, գրքի նկարազարդում, վարպետության դաս, գրքախաղ, մշակութային այցեր եւ այլ հետաքրքիր ու բազմակողմանի կրթամշակութային միջոցառումներ: «Գրքի ճամբար մարզերի երեխաների համար» ծրագրի նպատակն է նպաստել մանկապատանեկան ընթերցանության մշակույթի համաչափ զարգացմանը ՀՀ ողջ տարածքում, մասնավորապես՝ սահմանամերձ բնակավայրերում:

«Հայրենագիտություն»

Նախատեսված է 7-18 տարեկան երեխաների եւ պատանիների համար: Ծրագրի շրջանակում ներկայացվում են մեր հայրենիքի տեսարժան վայրերն ու պատմությունը: Հայրենաճանաչությանը միտված ծրագիրը նպատակ ունի ստեղծել նախադրյալներ կայացող սերնդի արժեքային համակարգի հարստացման, հայրենի պատմության ու դարավոր մշակույթի հանրահռչակման համար:

«Խնկո Ապոր թանգարանը գրադարանում»

Նախատեսված է 5-12 տարեկան երեխաների համար: Ծրագրում ներկայացվում է Խնկո Ապոր կյանքը, ստեղծագործությունները եւ տիկնիկային բեմականացում՝ նրա առակների հիման վրա: Նպատակն է ծանոթացնել Խնկո Ապոր կյանքին եւ ստեղծագործական կենսագրությանը:

«Մեծանում եմ ընթերցող»

Նախատեսված է 3-6 տարեկան երեխաների համար: Ծրագիրը ներառում է հեքիաթապատում, հեքիաթի նկարազարդում, զարգացնող խաղեր: Նպատակն է երեխաների մեջ ձեւավորել ընթերցելու մշակույթը վաղ տարիքից:

«Գրադարանախաղ»

Նախատեսված է 5-12 տարեկան երեխաների համար: Ծրագրի շրջանակում այցելուները խաղում են գրադարանի հեղինակային գրական, երաժշտական խաղերը: Նպատակն է խաղերի միջոցով երեխաներին ծանոթացնել հայ եւ օտարազգի գրականությանն ու երաժշտության ժառանգությանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ

ՀՐՊՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Շենգավիթ, Ա. Չեխովի փողոց, 39/2 շենք, 101 հասցեում գտնվող 35,9 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 19000000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 24.03.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին:Աճուրդի ավարտը՝ 03.07.2023թ:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:Նախավճարը վճարվում է «Բիէս-Թի» ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ:

Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԳԱՆ ՄԱՍԿԱՏՈՒՄ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, ելույթ կունենա Օմանի Սուլթանության մայրաքաղաք Մասկատի արքայական օպերային թատրոնում: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը Հռոմի օպերային թատրոնի հետ կներկայացնի ֆրանսիացի կոմպոզիտոր Ադոլֆ Ադանի «Ժիզել» բալետը:

Մասկատի արքայական օպերային թատրոնում երկու գործողությամբ բալետը՝ հայ եւ իտալացի արտիստների մեկնաբանմամբ, հանդիսատեսի համար բեմ կբարձրանա մարտի 9-ին, 10-ին եւ 11-ին: Նշենք, որ սա Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի երրորդ հյուրախաղն է Օմանում: Նախորդ երկու հյուրախաղերը կայացել են 2022 թվականին:

ԱՋԱԿՑԵԼ Է ԻՐ ՀԱՅ ՓԵՍԱՑՈՒԻՆ

Լիբանանցի դերասանուհի Նադին Նասիբ Նժեյմն աջակցել է իր հայ փեսացու Նարեկ Նարբեկյանին:

Ավելի վաղ Նադինն Instagram-ի իր հետեւորդների հետ կիսվել էր Նարբեկյանի հետ նոր լուսանկարով, սակայն դերասանուհու երկրպագուները մեկնաբանությունների բաժինը հեղեղել էին նեգատիվությամբ եւ քննադատությամբ՝ Նարեկին համարելով «չափից շատ կանացի»:

«Մի՛ կորցրեք հույսը սիրո մեջ, տվե՛ք ձեզ եւս մեկ հնարավորություն, եւ դուք այն անսպասելիորեն կգտնեք: Որոշ մարդիկ ատում են երջանկությունն ու այն ոչ մեկին չեն մաղթում. ապրեք ձեր կյանքով, եւ թող ասեն այն, ինչ ուզում են... Թող նրանց խոսքերն այրեն նրանց սրտերը»,- գրել է դերասանուհին:

Զույգը նշանադրվել է փետրվարի սկզբին՝ դերասանուհու 39-ամյակին: Նժեյմը, որն ունի ավելի քան 15,6 միլիոն հետեւորդ, տեսանյութ էր տեղադրել, որում Նարեկն իրեն ամուսնության առաջարկություն է անում. «Այսօր ես պետք է նշեի իմ ծնունդյան օրը, բայց, ի վերջո, նշեցի կյանքն ու սերը: Ես ասացի՝ այո»:

ԵՐԿՈՒ ՆՈՐ ԱԼԲՈՄ

Շերը նախատեսում է երկու նոր ալբոմ թողարկել իր սիրելիի՝ Ալեքսանդր Էվարդսի հետ: Նրա խոսքով՝ մոտ ապագայում ինքը նախատեսում է մեկնել Անգլիա՝ երկու նոր ալբոմ ձայնագրելու: Լեգենդար երգչուհին պատմել է, որ Ալեքսանդրը գրել է երգերից մի քանիսը, եւ այդ պատճառով ինքը շատ հուզված է եւ երջանիկ: «Նա պրոդյուսեր է եւ գրող: Նա անում է ամեն ինչ, որ երջանիկ լինեմ», - ասել է նա:

Շերը նաեւ հայտնել է, որ նախատեսում է շրջագայության մեկնել այս տարվա վերջին: «Կարծում եմ՝ ինչպես ցանկացած արտիստ, երբ լավ բան ես ունենում, հուզվում ես»:

● *Մարտի 9-ին «Մեցցո» ակումբում տեղի կունենա «By The Way» համերգային փառատոնը: Տոմսերի արժեքը՝4000 դրամ: Սկիզբը՝ժամը 21:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կոնկրետ ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնման տեխնիկական եւ այլ օժանդակ միջոցներ պետական պատվերի շրջանակներում ձեռք բերելու համար:

Մուրադ Դանիելյան (67 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մ. Դանիելյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնենք, որ անձը պրոթեզաօրթոպեդիկ եւ վերականգնողական պարագա ստանալու համար դիմում է կազմակերպություն՝ներկայացնելով՝

- անձը հաստատող փաստաթուղթ (մինչեւ 16 տարեկան երեխաների համար՝ ծննդյան վկայական եւ նրա ծնողներից մեկի կամ օրինական ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը),
- համապատասխան կարգավիճակը հավաստող փաստաթուղթ,
- հաշմանդամներն առաջին անգամ դիմելու դեպքում՝ նաեւ վերականգնողական անհատական ծրագիր,
- լսողական սարք ստանալու համար՝նաեւ սուրդոլոգի եզրակացությունը,
- աչքի եւ ձայնալարերի պրոթեզավորման համար՝ համապատասխան մասնագիտացված բժշկական կազմակերպությունների եզրակացությունները:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ բոլոր հաշմանդամներն ունեն անվճար բուժման արտոնություն: Բոլոր հաշմանդամները, իրենց վերականգնողական անհատական ծրագրին համապատասխան, ունեն անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագա ստանալու արտոնություն: 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամները եւ հաշմանդամ երեխաներն ունեն անվճար, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները՝ 50 տոկոս զեղչով դեղորայք ստանալու արտոնություն: 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամներն ունեն քաղաքային էլեկտրատրանսպորտով անվճար երթեւեկելու արտոնություն: Հաշմանդամին սայլակը տրամադրվում է 3 տարի ժամկետով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՎՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Վերջնահաշվարկ կատարելիս չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարները արդյոք ենթակա՞ են հարկման եկամտային հարկով:

Կարեն Հակոբյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 12-րդ ենթակետի համաձայն՝նվազեցվող եկամուտ է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) հետ կապված փոխհատուցման վճարները (այդ թվում՝ դիվանագիտական ծառայողներին տրվող փոխհատուցման վճարները)՝ բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ նվազեցվող եկամուտ է համարվում ՀՀ օրենսդրության համաձայն վճարված նպաստների գումարը՝ բացառությամբ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպաստների գումարների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարված բոլոր տեսակի կենսաթոշակների (այդ թվում՝ սահմանված կարգով կենսաթոշակների պարտադիր կուտակային համակարգին կամավորության սկզբունքով մասնակցելու դեպքերում վճարված կենսաթոշակները)՝ բացառությամբ սահմանված կարգով կենսաթոշակների կամավոր կուտակային համակարգին մասնակցության շրջանակներում վճարված կենսաթոշակների:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Հայաստանում՝ Վեդիում

Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի՝ WWF-ի հայաստանյան գրասենյակն իր ֆեյսբուքյան էջում տեսանյութ է հրապարակել Խոսրովի արգելոցում տեսախցիկի առաջ հայտնված լուսանից:

«Տեսեք, թե ինչպես է նրբագեղ լուսանը կեցվածք ընդունում «WWF-Հայաստան»-ի տեսախցիկի առջեւ»,- ասված է հաղորդագրության մեջ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.03.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: